ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 25

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28.02.2014
Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները.

Օրակարգ

1. Հաշվետվություն կուրսային և ավարտական աշխատանքների ընթացքի մասին:
   /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան /:
2. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստման և անցկացման մասին հաշվետվություն:
   /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան /:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ զեկուցողները նշեցին, որ ավարտական աշխատանքների կատարման գործընթացը սկսվել է 2013-2014 ուստարվա սեպտեմբերից: Անհատական ծանրաբեռնվածությամբ նախատեսված, ավարտական աշխատանք ղեկավարող դասախոսները ժամանակին ամբիոն են ներկայացրել թեմաներ: Ամբիոնային նիստերում քննարկվել են թեմաները, կատարվել են ուղղումներ, շտկումներ: Ուսանողները ժամանակին տեղեկացվել են և իրենց նախասիրությամբ ընտրել են կոնկրետ թեմաներ:

Ասվեց, որ ավարտական աշխատանքների թեմաները բավարարում են պահանջվող չափանիշները, ընտրված են այնպիսի թեմաներ, որոնք ուսանողի համար ներկայացնում են գիտական հետաքրքրություն: Շեշտադրվեց այն հանգամանքը, որ թեմաները արդիական են և կարևոր:

Զեկուցողները նշեցին նաև, որ կուրսային աշխատանքների կատարման գործընթացը սկսվել է 2013-2014 ուստարվա սեպտեմբերից: Անհատական ծանրաբեռնվածությամբ նախատեսված, կուրսային աշխատանք ղեկավարող դասախոսները ժամանակին ամբիոն են ներկայացրել թեմաներ: Ամբիոնային նիստերում քննարկվել են դրանք, կատարվել են ուղղումներ, շտկումներ: Ուսանողները ժամանակին տեղեկացվել են և իրենց նախասիրությամբ ընտրել են կոնկրետ թեմաներ: Ուշադրության արժանացավ այն փաստը, որը կան թեմաներ, որոնց վերաբերյալ մասնաճյուղում բացակայում է բավարար գրականությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ռաֆիկ Նահապետյանը, Վաչագան Ավագյանը, Վաչիկ Բրուտյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. *Ամբիոնային հաշվետվությունները կուրսային և ավարտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ համարել բավարար:*

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Ընթացիկ քննությունները նախորդ քննաշրջանների նման անց են կացվելու թեստային համակարգով: Յուրաքանչյուր առարկայի համար նախապես ամբիոնին տրված հարցաշարից դասախոսները կազմել են նվազագույնը թեստի վեց և ավելի տարբերակներ: Թեստը պետք է իր մեջ պարունակի չորս թեմա, յուրաքանչյուր թեման՝ երկու ենթահարց, հարցի արժեքը 0.5 միավոր: Մեկ թեմայից ուսանողը կհավաքի մեկ միավոր միայն այն դեպքում, եթե ճիշտ պատասխանի թեմայի երկու ենթահարցերին: Սակայն տեղի է ունեցել փոփոխություն գնահատման կարգում, հօգուտ ուսանողի. 4 թեմաներից յուրաքանչյուրի 1-ական ենթահարցին ճիշտ պատասխանելու դեպքում /4 ենթահարց/ ուսանողին գնահատել 2 միավոր, 3 ենթահարցին ճիշտ պատասխանելու դեպքում՝ 1 միավոր, 2 ենթահարցին ճիշտ պատասխանելու դեպքում՝ 0 միավոր:

Զեկուցողը նշեց, որ ընթացիկ ստուգումները կիրականացվեն գրավոր կամ բանավոր տարբերակով:

Նշվեց նաև, որ պատրաստ է 2013-2014 ուստարվա 2-րդ կիսամյակի 1-ին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների ժամանակացույցը:

Ընթացիկ քննությունների և ստուգումների անցկացման շրջանը կտևի սթ. մարտի 17-ից մինչև մարտի 29-ը /1-ին և 2-րդ կուրսի ուսանողների համար/: 4-րդ կուրսի ուսանողների համար պատրաստ է նաև 2-րդ ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների ժամանակացույցը, քանի որ մինչև սթ. մարտի 29-ը նրանք ավարտում են ուսումնական պարապմունքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Աիդա Մարդանյանը, Վաչագան Ավագյանը, Վաչիկ Բրուտյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. *Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2013-2014 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների ժամանակացույցը:*

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. Ալեքսանյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. Խաչատրյան